ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ческое сотрудничество, защита конкуренции, антиконкурентная деятельность

Изучение макроэкономических нормативных регуляторных особенностей в конкурентных средах позволяет не только разрабатывать способы реализации мер по улучшению бизнес-среды, но и оценивать систему рычагов для определения производительности. Результаты последовательного и универсального мониторинга улучшаются регулирующими органами по конкурентоспособности, и новое освещение может появиться в нормативной базе для деятельности участников общей структуры экономики

ANAHIT BAGHDASARYAN

MACROECONOMIC NORMATIVE SETTLEMENT SPECIFICATIONS IN COMPETITIVE ENVIRONMENT

Key words: *competiton, competitive environment, multilateral cooperation, economic cooperation, competition protection, anti-competitive activity*

Studying the macroeconomic normative regulatory peculiarities in competitive environments enables not only to design the ways to implement business environment improvement measures but also to evaluate the leverage system for detecting productivity. The results of consistent and versatile monitoring are improved by competitiveness regulatory bodies, and new lighting may emerge on the regulatory framework for the activities of the participants in the overall structure of the economy.

ՎԱՀԵ ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հիմնաբառեր. *ճգնաժամ, կառավարում, պարբերաշրջան, փափանում, կարգավորում, անկայունություն, կոնյունկտուրա, մոդել*

Ճգնաժամային կառավարումը իրականացվում է անընդհատ՝ տնտեսության կայուն, անկայուն և ճգնաժամային իրավիճակներում: Պետության կողմից իրականացվող հակապարբերաշրջանային քաղաքականությունը տնտեսական, քաղաքական գործիքների օգտագործումն է՝ տնտեսական կոնյունկտուրային փափանումները մեղմելու նպատակով: Տնտեսական պարբերաշրջանների փափանումները մեղմելու նպատակով, ակտիվ տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար, նախ և առաջ պետք է փիրապետել

որոշակի ինֆորմացիայի՝ կապված տնտեսության զարգացման կանխատեսումների հետ: Պետք է փորձել պարզել, թե որ ուղղությամբ է տնտեսությունը զարգանում և տնտեսության զարգացման շրջադարձային փուլերը երբ ի հայտ կգան:

Ճգնաժամային կառավարումը պետական կառավարման ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասն է, որը ներառում է ճգնաժամային իրավիճակների կանխատեսում և ժամանակին ախտորոշում, դրանց առաջացման պատճառների բացահայտում, այդ իրավիճակների ի հայտ գալու զսպման առաջնային միջոցառումների որոշում, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու և տնտեսության կայունացմանը ուղղված տնտեսական քաղաքականության իրականացում: Ճգնաժամային կառավարումը իրականացվում է անընդհատ՝ տնտեսության կայուն, անկայուն և ճգնաժամային իրավիճակներում: Իհարկե, տարբեր իրավիճակներում, պետությունը տարբեր գործառույթներ է իրականացնում: Այսպես.

- Տնտեսության կայունության պայմաններում ճգնաժամային կառավարման գործառույթներից են տնտեսական վիճակի մոնիթորինգը, իրավական դաշտի, պետական կառավարման համակարգի կառուցվածքի կատարելագործումը:
- Անկայունության դեպքում, երբ առկա է ճգնաժամի մեծ հավանականություն, իրականացնվում է առանձին (տնտեսության համար առաջնային) ճյուղերի, ձեռնարկությունների և արտադրության ծավալների վերահսկում:
- Ճգնաժամի պայմաններում հաճախ կիրառվում է ֆոնդային բաշխման համակարգը, գնագոյացման, արտադրության, եկամուտների և սպառման խիստ վերահսկողություն: Այս տեսանկյունից կառավարման տվյալ տեսակն իր ընդհանուր գծերով նման է խորհրդային վարչահրամայական համակարգին:

Տնտեսության ճգնաժամային կառավարման արդյունավետության բարձրացման հարցում կարևորվում է տնտեսության հակապարբերաշրջանային կարգավորման անհրաժեշտությունը:

Տնտեսական պարբերաշրջանների առաջացման պատճառների հարցում տնտեսագետների մոտ միակարծություն չկա, սակայն գրեթե բոլոր տնտեսագիտական ուղղությունների ներկայացուցիչները համոզված են, որ շուկայական տնտեսության պարբերաշրջանային տատանումները կարելի է հասցնել նվազագույնի պետության կողմից վարվող հակապարբերաշրջանային քաղաքականության միջոցով:

Պետության կողմից իրականացվող հակապարբերաշրջանային քաղաքականությունը տնտեսական, քաղաքական գործիքների օգտագործումն է՝ տնտեսական կոնյունկտուրային տատանումները մեղմելու նպատակով:

Տնտեսական պարբերաշրջանների տատանումները մեղմելու նպատակով, ակտիվ տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար, նախ և առաջ պետք է տիրապետել որոշակի ինֆորմացիայի՝ կապված տնտեսության զարգացման կանխատեսումների հետ: Այսինքն՝ պետք է փորձել պարզել, թե որ ուղղությամբ է տնտեսությունը զարգանում և տնտեսության զարգացման շրջադարձային փուլերը երբ ի հայտ կգան: Տնտե-

սության զարգացման ապագա միտումների վերաբերյալ ինֆորմացիայի ստացման ամենակիրառելի մոտեցումներն են՝

1. հիմնական տնտեսական ցուցանիշների ինդեքսը,
2. տնտեսական կանխատեսումների մոդելները:

Հիմնական տնտեսական ցուցանիշների ինդեքսը կազմված է 8 փոփոխականներից: Այդ փոփոխականները, որպես կանոն, նվազում են մինչև տնտեսության անկումը և աճում են մինչև վերելքի փուլի ի հայտ գալը: Դրանք են՝

1. աշխատանքային շաբաթվա միջին տևողությունը,
2. նախնական գործազրկության փոխհատուցման համար շաբաթական հայտերը,
3. նոր գործարանների և սարքավորումների վերաբերյալ պայմանագրերն ու պատվերները,
4. արտադրողներին տրված նոր պատվերները,
5. բնակարանային շինարարություն սկսելու թույլատվությունը,
6. շուկայում արժեթղթերի գների փոփոխությունը,
7. փողի M2 ագրեգատի առաջարկի փոփոխությունը,
8. սպառողների սպասումների ինդեքսը:

Այս ամբողջական ինդեքսի մեջ մտնող փոփոխականներն ընտրվել են տնտեսական պարբերաշրջանների շրջադարձերը կանխորոշելու իրենց հատկության և դրանց մասին արագ ու հաճախակի ստացվող ինֆորմացիայի մատչելիության պատճառով: Այս փոփոխականների ընտրությունը պարզելու համար կարելի է որպես օրինակ դիտարկել դրանցից որևէ մեկի ազդեցությունը տնտեսության գործարար ակտիվության փոփոխության վրա: Օրինակ՝ արտադրողներին տրվող նոր պատվերների մեծությունը՝ դրամական արտահայտությամբ, հնարավորություն է տալիս պարզելու գործարար ակտիվության աստիճանը: Արտադրողները, որպես կանոն, իրենց արտադրության ծավալներն ավելացնում են նախնական պատվերների ծավալների աճին համապատասխան:

Քեյնսականների կողմից, մշակվել է նաև կանխատեսման երկրորդ մեթոդը, որը հիմնված է էկոնոմետրիկ մոդելների վրա: Այս մոդելներն օգտագործվում են գնահատելու համար, թե ինչպես են տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններն ազդում հիմնական տնտեսական ցուցանիշների ապագա դրսևորումների վրա (իրական ՀՆԱ, գործազրկության և ինֆլյացիայի մակարդակներ): Այսպիսի էկոնոմետրիկ մոդելների տվյալների մշակումը որպես կանոն իրականացվում է համակարգիչների միջոցով, և այդ մոդելները հիմնականում տալիս են ճշգրիտ կանխատեսումներ տնտեսության հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

Ակտիվ տնտեսական քաղաքականության կողմնակիցները նշում են, որ հիմնական ցուցանիշների ինդեքսը, կանխատեսման էկոնոմետրիկ մոդելները և մյուս տնտեսական ցուցանիշները հանդիսանում են նախազգուշական ազդակներ տնտեսական քաղաքականություն մշակողների համար: Օրինակ՝ նախքան տնտեսական պարբերաշրջանի անկման փուլի ի հայտ գալը հիմնական ցուցանիշների ինդեքսը տնտեսագետներին և որոշում ընդունողներին ազդանշան է տալիս տնտեսական անկման հնարավորությունների մա-

սին: Տիրապետելով այսպիսի ինֆորմացիայի, տնտեսական քաղաքականություն մշակելիս, պետք է անցում կատարել դեպի մակրոտնտեսական խթանման քաղաքականության: Այս առումով կարևորվում է ժամանակի ճիշտ ընտրությունը, այսինքն, երբ պետք է խթանել ամբողջական պահանջարկը, իսկ երբ պետք է կիրառել տնտեսական սահմանափակումներ:

Որպեսզի հնարավոր լինի ճգնաժամերը ժամանակին բացահայտել, ներկայումս կիրառվում են տարբեր մեթոդներ, հաշվարկվում են մի շարք ինդեքսներ, ինչպիսիք են Բաֆետի ինդեքսը և Շիլերի ինդեքսը և այլն: Դիտարկենք վերոնշյալ ինդեքսներն ավելի մանրամասն.

Բաֆետի ինդեքս (Ուորեն Բաֆետի պատվին)

Այս ինդեքսը բավականին հավաստի է համարվում կանխատեսումներ կատարելու համար: Այս ինդեքսի էությունը կայանում է նրանում, որ վերցվում է ամերիկյան ընկերությունների շուկայական արժեքների գումարի և ԱՄՆ ՀՆԱ-ի հարաբերակցությունը: Ինդեքսի առավելությունը կայանում է նրանում, որ այն չի արտահայտվում դրամական միավորով, այդ պատճառով էլ գնաճով ճշգրտելու կարիք չկա: Բաֆետի ինդեքսը ավելի ընդհանրացված ձևով իրենից ներկայացնում է արժեթղթերի շուկայի կապիտալացման գործակիցը, որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$\text{Շուկայի կապիտալիզացիան ՀՆԱ-ի նկատմամբ} = \frac{\text{Շուկայի կապիտալիզացիայի գործակիցը}}{\text{ՀՆԱ}}$$

Գործակիցը կարող է օգտագործվել ինչպես կոնկրետ երկրի շուկայի համար, այնպես էլ ամբողջ աշխարհի համար՝ կախված բանաձևում օգտագործվող ցուցանիշներից: Այս հարաբերության արդյունքը ցույց է տալիս ՀՆԱ-ի այն տոկոսը, որը ներկայացնում է արժեթղթերի շուկայի արժեքը: Եթե արդյունքը մեծ է 100%-ից, ապա շուկան գերարժևորված է, իսկ 50%-ին մոտ արժեքի դեպքում, որը մոտ է ԱՄՆ-ի շուկայի պատմական միջինին՝ թերագնահատված: Ավելի մանրամասն ցուցանիշի արժեքների նշանակությունը ներկայացված է աղյուսակում[1]:

Աղյուսակ 1

Շուկայի կապիտալացումը ՀՆԱ-ի նկատմամբ

Total Market Cap/GDP	Գնահատականը
< 50%	Էապես թերագնահատված (Significantly Undervalued)
50% -75%	Չափավոր թերագնահատված (Modestly Undervalued)
75% - 90%	Արդարացի գնահատված (Fair Valued)
90% - 115%	Չափավոր գերագնահատված (Modestly Overvalued)
> 115%	Էապես գերագնահատված (Significantly Overvalued)

Ներկայումս այս գործակիցը հաշվարկվում է 139,1% (*23.10.2017*)[2], այսինքն արժեթղթերի շուկան համարվում է էապես գերագնահատված ինչը խոսում է ճգնաժամի ի

[1] http://www.gurufocus.com/stock-market-valuations.php

[2] Նույն տեղում;

հայտ գալու մեծ հավանականության մասին: Այսպես, 2000թ-ին, Համաշխարհային բանկի տվյալների համաձայն, գործակիցը հաշվարկվել էր 153%, որը գերարժևորման նշան էր: Հենց այդ ժամանակ տեղի ունեցավ ինտերնետային (dotcom) «փուչիկի» պայթյունը, իսկ, օրինակ 2007թ-ին՝ մեծ ֆինանսատնտեսական ճգնաժամի նախօրեին, այն կազմում էր գրեթե այնքան, որքան այսօր է: Գրաֆիկորեն այն կունենա հետևյալ տեսքը[1].



Գծանկար 1. ***Շուկայի կապիտալացման գործակից/ՀՆԱ հարաբերակցություն***

Շիլերի ինդեքսը

Մեկ այլ գնահատող ցուցանիշ է Շիլերի ինդեքսը (P/E): Այս ցուցանիշը մշակվել է Յելի համալսարանի պրոֆեսոր, տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակակիր (2013 թ.) Ռ. Շիլերի կողմից 2013 թ-ին: Շիլերի ինդեքսը իրենից ներկայացնում է արժեթղթի շուկայական արժեքի և ամենամյա դիվիդենտների միջին մեծության հարաբերակցությունը (10 տարվա կտրվածքով), ինչպես նաև հաշվի է առնվում սպառողական գների ինդեքսը: Օրինակ, եթե բաժնետոմսը արժե 40$, իսկ վերջին 10 տարիների ընթացքում մեկ բաժնետոմսին բաժին ընկնող դիվիդենտը միջինում կազմել է 2 դոլար, ապա հարաբերակցությունը կլինի 20$: Սա նշանակում է, որ եթե ինչ-որ մեկը գնի տվյալ բաժնետոմսը, ապա ներդրված գումարը դիվիդենտների տեսքով ետ կվերադարձնի 20 տարվա ընթացքում:

Զարգացած շուկաների համար նորմալ արժեքը համարվում է 10-20 տարին: Ոմանք որպես վերին սահման սահմանում են 25 տարին, ինչը նշանակում է, որ բաժնետոմսերը պետք է «ետ գնվեն» ոչ ավել, քան 20-25 տարվա ընթացքում: Ներկայումս աշխարհը շատ արագ է փոփոխվում, հետևաբար պլանավորել ավելի քան 20-25 տարվա կտրվածքով, նույնիսկ զարգացած տնտեսությունների համար,

[1] Նույն տեղում;

անիրագործելի է: Այսինքն, Շիլերի ինդեքսը 20-ից բարձր լինելու դեպքում շատ դժվար է կառուցել ներդրումային ռազմավարություն: Այժմ, այդ ցուցանիշը հավասար է 31,7 (*23.10.2017*)[1]: Իսկ դա նշանակում է, որ արժեթղթերի շուկայում սպեկուլյատիվ գործարքների գերակշռումը հանգեցնում է բաժնետոմսի գնի արագ աճին, այնուհետև՝ կտրուկ նվազմանը: Այսինքն, սպեկուլյանտների գործունեությունը նպաստում է արժեթղթերի շուկայում «փուչիկների» ձևավորմանը: Արժեթղթերի շուկայում ներկայումս ձևավորված բարձր ցուցանիշը վկայում է արժեթղթերի մեծամասնության գերագնահատված լինելու մասին, ինչն էլ համաշխարհային տնտեսական ճգնաժամի նախանշան է[2]:



Գծանկար 2. ***Արժեթղթի շուկայական արժեքի և ամենամյա դիվիդենտների միջին մեծության հարաբերակցությունը***

ВАГЕ БУЛАНИКЯН

НЕСКОЛЬКО ВОПРОСОВ КРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ И АНТИЦИКЛИЧЕСКОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКИ

Ключевые слова: *кризис, управление, цикл, вибрация, регулирование, нестабильность, конъюнктура, модель.*

Кризисное управление в экономике осуществляется непрерывно: в стабильной, нестабильной и в кризисной ситуации. Антициклическая политика государства заключается в использовании экономических, политических инструментов для смягчения колебаний экономи-

[1] https://www.quandl.com/data/MULTPL/SHILLER_PE_RATIO_MONTH-Shiller-PE-Ratio-by-Month
[2] Նույն տեղում:

ческой конъюнктуры. Чтобы смягчить колебания экономических циклов для проведения активной экономической политики, необходимо располагать информацией, связанное с прогнозом экономического развития. Необходимо выяснить, когда выявятся циклические этапы экономического развития.

VAHE BULANIKYAN

SEVERAL ISSUES OF CRISIS MANAGEMENT AND COUNTERCYCLICAL REGULATION OF THE ECONOMY

Key words: *crisis, management, cycle, vibration, regulation, instability, conjuncture, model.*

Crisis management in the economy is carried out constantly, in a stable, volatile, and crisis situation. The State's countercyclical policy is to use economic, political instruments to mitigate economic conjuncture fluctuations. In order to mitigate the fluctuations in economic cycles, in order to carry out an active economic policy, first of all, it has to have some knowledge of the economic development forecasts. It is necessary to try to find out in what direction the economy develops and when the turning stages of economic development will emerge.

ԼՈՒՍՅԱ ԳԱԼՈՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ,
ՀՊՏՀ ԳՄ

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հիմնաբառեր. *պետական պարտք, ընթացիկ պարտք, վերաֆինանսավորման ռիսկ, փոխարժեքի ռիսկ, տոկոսադրույքի ռիսկ, գործառնական ռիսկ, զգայունություն*

ՀՀ պետական պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը լուծելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ռիսկերի կառավարումը: Հոդվածում քննարկվել են պետական պարտքի հետ կապված հիմնական ռիսկերի (վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական) և դրանց կառավարման որոշ հիմնահարցեր: Ռիսկերի վերլուծությունը ամբողջական դարձնելու համար ներկայացվել են նաև զգայունության վերլուծությունների արդյունքները: Վերջինս ենթադրում է շուկայական փոփոխականների նկատմամբ կիրառված տարբեր շոկերի հետևանքով ծախսերի և ռիսկերի ցուցանիշների կանխատեսվող հիմնական սցենարի արդյունքներից շեղման չափի գնահատում և վերլուծություն: